



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 նոյեմբերի 2003թ.

N 337

ք.Ստեփանակերտ

Կոնցենսիոն պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մ ա ս ի ն

Համաձայն «Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու /կոնցենսիայի/ մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը
n p n 2 ու մ է.

Հաստատել կոնցենսիոն պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

Կ Ո Ն Յ Ե Մ Ի Ո Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

/օրինակելի ձև/

ք. Ստեփանակերտ

„___”_____ 200 թ.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության _____ նախարարությունը /այսուհետ՝ լիազոր մարմին/, ի դեմս նախարար _____ - ի, որը գործում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անունից, մի կողմից, և _____ ընկերությունը /այսուհետ՝ լիցենզառու/ ի դեմս _____ - ի, մյուս կողմից, ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով, „Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու /կոնցեսիայի/ մասին», Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի /այսուհետ՝ կոնցեսիայի օրենք/ 51-րդ հոդվածով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003թ. _____ „Ընդերքի օգտագործման և պահպանության քննազավառներում լիազորված պետական մարմիններ սահմանելու, դրանց իրավասությունները սահմանազատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի ու „Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տարամադրելու /կոնցեսիայի/ մասին», Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրակումն ապահովող միջոցառումների մասին», թիվ _____ որոշմամբ և հիմք ընդունելով հանքարդյունահանման հատուկ լիցենզիա ստանալու նպատակով լիցենզառուի _____ 200 թ. _____ - ի գրավոր դիմումը, ինչպես նաև դրա վերաբերյալ ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովի 200 թ. _____ -ի N _____ դրական եզրակացությունը կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ պայմանագիր/ հետևյալի մասին.

I. Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Մ Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ո Ղ Հ Ա Մ Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ը

1. Պայմանագրում օգտագործվող հասկացություններն են՝

լիազոր մարմին՝ կոնցեսիայի օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմին.

լիցենզիա՝ կոնցեսիայի օրենքով սահմանված կարգով լիցենզառուին 200 թ. _____ -ին տրված N _____ հանքարդյունահանման հատուկ լիցենզիա.

երաշխավոր՝ կազմակերպություն կամ անձ, որը լիցենզառուի հետ կնքված երաշխավորության պայմանագրով կամ այլ եղանակով երաշխավորում է լիցենզառուի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող ֆինանսական կարողությունը: Երաշխավորության առկայության դեպքում երաշխավորությունը հավաստող փաստաթուղթը կցվում է պայմանագրին և դրա անբաժանելի մասն է.

պարտատեր՝ հանքարդյունահանման ծրագրի շրջանակներում լիցենզառուին ֆինանսավորում ապահովող բանկեր, վարկային և /կամ/ այլ ֆինանսական կազմակերպություններ, այլ փոխատուներ, որոնք լիցենզառուի հայեցողությամբ ներկայացված և լիազոր մարմնի կողմից գրանցված են համապատասխան գրանցամատյանում.

վերահսկողության իրավունք՝ պարտատերի և /կամ/ երաշխավորի կողմից լիցենզիայի շրջանակներում լիցենզառուի գործունեության նկատմամբ կոնսցիայի օրենքի 67-րդ հոդվածի համաձայն վերահսկողություն իրականացնելու հնարավորություն, որը ձեռք է բերվել լիցենզառուի հետ կնքված լիցենզիայի գրավի, այլ պայմանագրի կամ այլ համաձայնության ուժով:

II. ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2. Լիցենզառուի և լիազոր մարմնի միջև 200 թ. _____ - ին կնքված լիցենզային պայմանագիրը հանդիսանում է պայմանագրի մասը: Պայմանագրի դրույթները մեկնաբանվում են լիցենզային պայմանագրով կողմերի իրավունքների և ստանձնած պարտավորությունների համադրմամբ:

3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում լիցենզիայի հետ միաժամանակ և գործում է լիցենզիայի գործողության ամբողջ ժամանակահատվածում:

4. Պայմանագիրը գործում է նաև լիցենզիայով տրամադրված ընդերքի տնդամասի հնարավոր փոփոխության դեպքում:

III. ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

5. Լիցենզառուն մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը կամ այդ օրը լիազոր մարմին է ներկայացնում մասնագիտական եզրակացություն, որը հավաստում է, որ լիցենզառուն՝

ա/ վճարունակ է.

բ/ ունի կամ կունենա լիցենզիայի շրջանակներում հանքարդյունահանման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ ներառյալ հիմնական և շրջանառու միջոցները:

6. Մասնագիտական եզրակացությունը կարող է վերաբերվել՝

ա/ լիցենզառուի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող անձանց կամ այլ ընկերությունների լսմբի կողմից տրամադրված ֆինանսական աջակցությանը, որի դեպքում նշված անձինք ստանձնում են համապատասխան ֆինանսական պարտավորություն.

բ/ ֆինանսավորմանը, որի աղբյուրը դեռևս ճշտված չէ, և պահանջվում է միջազգային հեղինակություն վայելող բանկի կողմից տրված հավաստագիր, որի համաձայն՝

լիցենզառուն և /կամ/ լիցենզառուի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող անձը ֆինանսապես կայուն է,

լիցենզառուն ի վիճակի է ձեռք բերել ֆինանսական միջոցներ նշված հավաստագրով նախատեսված ֆինանսավորման ժամանակացույցին համապատասխան:

7. Պայմանագրի 5-րդ կետում նշված մասնագիտական եզրակացությունը կարող է տրամադրվել լիազոր մարմնի առաջարկած ցանկում ընդգրկված ցանկացած անձի կողմից:

IV. ԲՈՆՈՒՍ

8. Կողմերը հաստատում են, որ՝

ա/ լիցենզառուի լիցենզիան տրված է բոնուսի վճարման պայմանով՝ հաշվի առնելով , որ լիազոր մարմնի կողմից լիցենզառուին տրամադրվում է _____ հանքավայրի մասին առևտրային արժեք ներկայացնող տեղեկատվություն.

բ/ տրամադրվող տեղեկատվությունը և բոնուսի չափը որոշված են բոնուսի հավաստագրում, որը կցված է պայմանագրին և կազմում է դրա անբաժանելի մասը.

գ/ բոնուսի գումարը լիցենզառուի կողմից պետք է վճարվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե՝ լիցենզային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամկետում և կարգով.

դ/ սահմանված ժամկետում բոնուսը չվճարելը պայմանագրի լուծման և լիցենզիայի գործողության դադարեցման հիմք է:

V. ՀԱՐԿԵՐՆ, ՏՈՒՐՔԵՐՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐՆ

9. Սույն օրինակելի պայմանագրի հիման վրա կնքվող կոնցեսիոն պայմանագրում կարող է կիրառվել սույն կետով սահմանված տարբերակներից միայն մեկը՝ լիցենզառուի ընտրությամբ, ընդ որում, տարբերակն ընտրվում է բացառապես կոնկրետ կոնցեսիոն պայմանագրի կնքման պահին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով համապատասխան կարգավորում նախատեսված լինելու դեպքում:

Տարբերակ 1.

ա/ լիցենզառուի նկատմամբ կիրառվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությունները.

բ/ լիազոր մարմինը հավաստում, իսկ լիցենզառուն ընդունում է, որ պայմանագրի ստորագրման պահին, համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող օրենսդրության, սահմանված են շահութահարկի և ավելացված արժեքի հարկի հետևյալ դրույքաչափերը՝

շահութահարկ _____ տոկոս

ավելացված արժեքի հարկ _____ տոկոս:

Հարկվող շահույթի մեծության որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող թույլատրելի նվազեցումների գծով լիցենզառուի համար սահմանվում են՝

սեփական և ներգրավված միջոցների թույլատրելի հարաբերակցությունը _____ տոկոս

ֆինանսական միջոցների ներգրավման առավելագույն դրույքաչափը _____ տոկոս.

գ/ լիազոր մարմինը նրաշխատիրում է, որ եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության մեջ կատարվող որևէ փոփոխության դեպքում շահութահարկի և /կամ/ ավելացված արժեքի հարկի դրույքաչափերը գերազանցեն պայմանագրի 9-րդ կետի 1-ին տարբերակի „բ„ ենթակետում նշված չափը, որի հետևանքով լիցենզառուն կկրի հավելյալ ծախսեր, ապա այդ ծախսերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կփոխհատուցվեն:

Սույն ենթակետով սահմանված դրույթը կիրառվում է բացառապես լիցենզառուի գործունեության նկատմամբ:

Սույն ենթակետի իմաստով „գործունեություն„ հասկացությունը նշանակում է հանքարդյունահանման գործողություն, որն իրականացվում է լիցենզիայով լիցենզառուին տարամադրված ընդերքի տեղամասում՝ բացառապես լիցենզիայի շրջանակներում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության փոփոխության հետևանքով սույն ենթակետով սահմանված հավելյալ ծախսերի փոխհատուցումները վճարվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված կարգով և ժամկետներում.

դ/ լիցենզառուն պարտավոր է վճարել՝

ռոյալթի /այդ թվում՝ լրացուցիչ ռոյալթի/ կոնցեսիայի օրենքով սահմանված չափով և կարգով.

կոնցեսիոն վճար _____ չափով.

շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող հատկացումներ՝ _____ չափով.

ե/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված և սույն ենթակետով չնախատեսված հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները լիցենզառուի կողմից ենթակա են վճարման՝ համապատասխան օրենքներով սահմանված ընդհանուր կարգով:

Տարբերակ 2.

/Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանվող հարկման այլընտրանքային մեխանիզմներ/

ա/ եթե լիցենզառուն համաձայն է N _____ հավելվածով սահմանված վճարման պայմաններին, ապա լիցենզառուի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ վճարային պարտավորությունները սահմանափակվում են հետևյալ լրացուցիչ հարկերով ու տուրքերով՝

/նշվում են հարկերի ու տուրքերի այն տեսակները, որոնք պայմանագրի հիման վրա կնքվող կոնկրետ կոնցեսիոն պայմանագրի կնքման պահին սահմանված կլինեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությամբ/.

բ/ կողմերն ընդունում են, որ անկախ հարկման ընտրված եղանակից, պարտադիր վճարման ենթակա են՝

կոնցեսիայի օրենքով նախատեսված լուրջ խախտումները, այդ թվում՝ լրացուցիչ լուրջ խախտումներ՝ կոնցեսիայի օրենքով սահմանված չափով և կարգով.

կոնցեսիոն վճարը _____ չափով.

շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող հատկացումները _____ չափով,

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները:

VI. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

10. Լիցենզառուն պարտավոր է լիազոր մարմինն տրամադրել հանքարդյունահանման հատուկ լիցենզիա ստանալու նպատակով առաջարկվող ծրագրերի մասին առկա համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև պահանջվող այլ նյութեր՝ լիազոր մարմնի սահմանած կարգով և ժամկետներում:

VII. ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԳՐԱՆՅՈՒՍԸ

11. Լիազոր մարմինը պարտավոր է գրանցել այն պարտատերերին, որոնց լիցենզառուն իր հայեցողությամբ ներկայացրել է գրանցման համար և գրանցման պահից 5 օրվա ընթացքում դրա մասին գրավոր ծանուցել լիցենզառուին:

VIII. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

12. Լիցենզառուն պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ելնելով այն հանգամանքից, որ իր կողմից կատարվող աշխատանքները գործունեության առավել վտանգավորության աղբյուր են, հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում պարտավոր է ապահովագրել հետևյալ ռիսկերը՝

ա/ հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում կամ դրա հետևանքով երրորդ անձի գույքին հասցված վնաս.

բ/ հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում կամ դրա հետևանքով քաղաքացիների, այդ թվում նաև հանքարդյունահանման աշխատանքների հետ անմիջականորեն չկապված քաղաքացիների կյանքին կամ առողջությանը պատճառած վնաս.

գ/ հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում կամ դրանց հետևանքով շրջակա միջավայրին պատճառված վնաս,

դ/ հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում կամ դրանց հետևանքով իր կողմից շրջակա միջավայրին պատճառված վնասի արդյունքում երրորդ անձի գույքին, կյանքին կամ առողջությանը պատճառված վնաս:

13. Լիցենզառուն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը պաշտպանում է բոլոր գործողություններից, պահանջներից, վնասներից, կորուստներից, ինչպես նաև սեփականության կորստին կամ վնասին, կամ անձանց վնաս պատճառելուն, կամ մահվանն առնչվող պահանջներից, որոնք առաջացել են լիցենզառուի կողմից կամ նրա անունից կամ պայմանագրի, լիցենզիայի համաձայն իրականացված հանքարդյունահանման աշխատանքների կապակցությամբ որևէ գործողության կամ անգործողության հետևանքով:

Սույն կետով սահմանված երաշխիքը չի կիրառվում, եթե այդ գործողությունը, պահանջը, կորուստը կամ վնասը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կողմից տրված ցուցումների կամ նրանց անունից տրված օրենքին հակասող ակտի հետևանքն են:

IX. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

14. Լիցենզառուի հանքարդյունահանման կամ ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելիս պարտավոր է ղեկավարվել բնապահպանության ոլորտը կանոնակարգող օրենքներով և այլ իրավական ակտերով, սահմանված կարգով ու ժամկետներում իրականացնել հանքարդյունահանման նախագծերով հաստատված շրջակա միջավայրի պահպանության միջոցառումները, օգտագործել արդիական տեխնիկական սարքավորումներ և կիրառել մեթոդներ՝ նպատակադրված շրջակա միջավայրին վնաս պատճառելը կանխելու, արտանետումների, արտահոսքերի և արտադրական թափոնների կրճատմանը, բնական ռեսուրսների չնախատեսված կորստից կամ վնասից խուսափելուն և բնապահպանական սահմանափակումների, նորմերի ու կանոնների պահպանության նկատմամբ հսկողության իրականացմանը:

15. Բազի լիցենզիայով և պայմանագրի 14-րդ կետով լիցենզառուի ստանձնած շրջակա միջավայրի պահպանության պարտավորություններից՝ լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից 12 տարվա ընթացքում լիազոր մարմինը լիցենզառուին չի պարտավորեցնում ստանձնել շրջակա միջավայրին առնչվող լրացուցիչ պարտավորություններ, եթե՝

ա/ գիտական նորոյթը, որը բացահայտում է լիցենզիայով նախատեսված հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում վտանգի առկայությունը կամ վնասակար հետևանքները, հայտնի է դարձել լիցենզիայի տրամադրումից հետո:

բ/ հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում ընդունվել են շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերվող նոր օրենքներ, և տեղի է ունեցել անկանխատեսելի բնական աղետ, կամ բացահայտվել են լրացուցիչ բնապահպանական ռիսկեր, տեխնիկական նորոյթ:

Անկախ պայմանագրի 15-րդ կետով նախատեսված պայմանից լիցենզառուի երաշխավորում է, որ իր կողմից կձեռնարկվեն առավելագույն հնարավոր միջոցներ հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում ներդնել (լիցենզիայի տրամադրումից հետո բացահայտված) շրջակա միջավայրին հասցվող վնասը նվազեցնող առաջադեմ տեխնոլոգիաներ:

16. Լիցենզառուի նկատմամբ կիրառվում են շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող հետևյալ սահմանափակումները՝

X. ԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՅՈՒՄԸ

17. Կոնցեսիայի օրենքի 31-րդ հոդվածի համաձայն լիցենզառուին գրավոր զգուշացում /այսուհետ՝ զգուշացում/ ներկայացնելու դեպքում լիազոր մարմինը դրա պատճենն ուղարկում է լիցենզառուի պարտատերերին, իսկ երաշխավորության առկայության դեպքում նաև երաշխավորին զգուշացման մեջ նշելով զգուշացման պատճառները վերացնելու ժամկետը:

18. Զգուշացումը ներկայացվելուց հետո 5 օրվա ընթացքում լիցենզառուի իրավունք ունի դիմելու _____ մասնագիտացված կազմակերպություն /այսուհետ՝ փորձագետ/ զգուշացման պատճառները վերացնելու ժամկետի մասին եզրակացություն ստանալու նպատակով դրա մասին գրավոր ծանուցելով լիազոր մարմնին:

19. Եթե զգուշացումը ներկայացվելուց հետո 40 օրվա ընթացքում լիցենզառուի լիազոր մարմին է ներկայացնում փորձագետի եզրակացությունը, որտեղ հիմնավորվում է տվյալ խախտումը վերացնելու համար այլ ժամկետ սահմանելու անհրաժեշտությունը, քան սահմանված է լիազոր մարմնի կողմից, ապա լիազոր մարմինը 5 օրվա ընթացքում փորձագետի եզրակացության հիման վրա, սահմանում է զգուշացման պատճառների վերացման նոր ժամկետ՝ դրա մասին գրավոր ծանուցելով լիցենզառուին: Ընդ որում զգուշացման պատճառների վերացման ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել զգուշացման օրվանից 180 օրը:

20. Լիցենզառուի կողմից պայմանագրի 18-րդ կետով սահմանված ժամկետում փորձագետին դիմելու վերաբերյալ լիազոր մարմնին չծանուցելու դեպքում զգուշացման պատճառների վերացման համար լիազոր մարմնի սահմանած ժամկետը մնում է անփոփոխ:

21. Փորձագիտական եզրակացություն ստանալու հետ կապված բոլոր ծախսերը կրում է լիցենզառուին:

22. Եթե լիցենզառուի լիազոր մարմնի սահմանած ժամկետում չի վերացրել զգուշացման պատճառները, ապա լիազոր մարմինը դրա մասին ծանուցում է պարտատերերին:

23. Եթե պայմանագրի 22-րդ կետով նախատեսված ծանուցումից հետո 10 օրվա ընթացքում պարտատիրոջ /իսկ երաշխավորության առկայության դեպքում նաև երաշխավորի/ անունից գործելու համար նշանակված կառավարիչը կամ գործակալը /այսուհետև կառավարիչ/ և լիազոր մարմինը համաձայնագիր են կնքում կառավարչի կողմից զգուշացման պատճառները վերացնելու կամ, թե զգուշացման պատճառները հնարավոր չէ վերացնել, դրա դիմաց համարժեք փոխհատուցում վճարելու մասին /այսուհետև համաձայնագիր/, ապա լիազոր մարմինը համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում չի դադարեցնում լիցենզիայի գործողությունը: Ընդ որում համաձայնագրի ժամկետը սահմանվում է զգուշացման պատճառները վերացնելու համար սահմանված ժամկետի չափով:

24. Կառավարիչը համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում կարող է՝

ա/ վերացնել զգուշացման պատճառները կամ վճարել դրա դիմաց առաջարկված փոխհատուցումը.

բ/ վերահսկողության իրավունքը վաճառել կամ այլ կերպ օտարել երրորդ անձի, որը կպարտավորվի այդ ընթացքում վերացնել զգուշացման պատճառները կամ վճարել համապատասխան փոխհատուցում:

25. Համաձայնագիրը չկնքելու կամ համաձայնագրով զգուշացման պատճառները վերացնելու համար սահմանված ժամկետում զգուշացման պատճառները կառավարչի կամ նրանից վերահսկողության իրավունքը ձեռք բերած անձի կողմից չվերացնելու կամ համարժեք փոխհատուցումը չվճարելու դեպքերը կարող են հիմք հանդիսանալ լիազոր մարմնի որոշմամբ լիցենզիայի գործողությունը դադարեցնելու համար:

26. Զգուշացումից հետո նոր զգուշացման համար հիմք հանդիսացող որևէ գործողության կամ անգործության փաստի առկայության դեպքում պայմանագրի 23-րդ կետն ուժը կորցնում է:

27. Պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցվում է լիցենզային պայմանագրի գործողության ժամկետի դադարեցմանը համապատասխան:

XI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

28. Լիցենզառու պայմանագիրը կարող է լուծել զանկացած ժամանակ դրա մասին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով լիազոր մարմին:

29. Լիազոր մարմնի կողմից լիցենզիայի գործողությունը կոնցենսիայի օրենքով սահմանված դեպքերում և կարգով վաղաժամկետ դադարեցնելու դեպքում պայմանագիրը համարվում է լուծված:

XII. ԼԻՑԵՆԶԻԱՆ ՓՈՒՍԿԵՆՆԵՐԸ

30. Լիցենզիան կոնցենսիայի օրենքով սահմանված կարգով այլ անձի փոխանցելու դեպքում նրան են անցնում լիցենզառուի պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները:

XIII. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

31. Պայմանագրի իմաստով „վեճ“, հասկացությունը նշանակում է զանկացած անհամաձայնություն, որը կողմերի միջև առաջանում է պայմանագրի կամ լիցենզիայի շրջանակներում:

32. Պայմանագրով վեճերը ենթակա են լուծման հետևյալ ընթացակարգի համաձայն՝

ա/ բանակցությունների միջոցով.

բ/ անկախ փորձագետի /այսուհետև՝ փորձագետ/ միջոցով, որը նշանակվում է կողմերի համաձայնությամբ.

գ/ դատական կարգով՝

կողմերի համաձայնության դեպքում վեճի լուծումը կարող է հանձնվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարաններին: Այս դեպքում հայցվոր կողմը նախապես ծանուցում է պատասխանողին՝ վեճը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարաններին հանձնելու մասին: Ծանուցման ստացման պահից 10 – օրյա ժամկետում ծանուցմանը չառարկելու դեպքում ծանուցումը համարվում է ընդունված, համաձայնությունը՝ տրված,

այն դեպքում, երբ կողմերի միջև չկա վեճը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարաններին հանձնելու համաձայնություն, վեճը ենթակա է լուծման Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնի /այսուհետև՝ ՆՎԼՄԿ/ կողմից:

33. Պայմանագրի 32-րդ կետի „գ., ենթակետի երկրորդ պարբերությամբ նախատեսված կարգով վեճերի լուծման դեպքում կողմերը համաձայնում են, որ

ա/ 1965թ. մարտի 18-ին Վաշինգտոնում ստորագրված „Պետությունների և այլ պետությունների ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև ներդրումային վեճերի կարգավորման մասին,, կոնվենցիայի /այսուհետ՝ կոնվենցիա/ 25 /1/-րդ կետի հիման վրա պայմանագրի հետ կապված կամ դրանից բխող յուրաքանչյուր վեճ համարվում է ներդրումներից ուղղակիորեն բխող իրավական վեճ.

բ/ կոնվենցիայի 25/2/-րդ կետի հիման վրա լիցենզառուն կոնվենցիան ստորագրած և վավերացրած երկրի տնտեսավարող սուբյեկտ է.

գ/ վեճը ՆՎԼՄԿ-ի միջնորդ դատարան ուղղելու լիցենզառուի իրավունքի վրա չպետք է ազդի այն փաստը, որ լիցենզառուն երրորդ կողմից ստացել է վեճի առարկա հանդիսացող որևէ կորստի կամ վնասի լրիվ կամ մասնակի փոխհատուցում՝ պայմանով, որ լիազոր մարմինը պահանջում է ապացույց, որ երրորդ կողմը համաձայն է լիցենզառուի կողմից նման իրավունքի իրականացմանը.

դ/ 1984թ. սեպտեմբերի 26-ի ՆՎԼՄԿ-ի միջնորդ դատավարության կանոններն իրենց բոլոր փոփոխություններով հանդերձ կիրառվում են պայմանագրին համապատասխան վարվող բոլոր միջնորդ դատավարությունների նկատմամբ:

ե/ պայմանագրին համապատասխան վարվող միջնորդ դատավարությունները տեղի են ունենում Լոնդոնում.

զ/ պայմանագրին համապատասխան ստեղծված ՆՎԼՄԿ-ի միջնորդ դատարանը կազմված է երեք միջնորդ դատավորից: Միջնորդ դատավորներից մեկը նշանակվում է լիազոր մարմնի կողմից, երկրորդ միջնորդ դատավորը՝ լիցենզառուի կողմից, և երրորդը, որը պետք է լինի միջնորդ դատարանի նախագահը, նշանակվում է կողմերի համաձայնությամբ կամ, եթե կողմերը համաձայնության չեն գալիս, ապա նշանակվում է ՆՎԼՄԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից: Միջնորդ դատավորներից ոչ մեկը չպետք է լինի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կամ այն պետության քաղաքացի, որի քաղաքացին վիճող կողմերից մեկն է:

XIV. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

34. Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած կողմն ազատվում է պատասխանատվությունից, եթե ապացուցի, որ դրանց իրականացմանը խոչընդոտել են անհաղթահարելի ուժի /ֆորս-մաժորային/ հանգամանքները: Պայմանագրի շրջանակներում պարտավորությունների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել այն ժամկետով, որի ընթացքում առկա է անհաղթահարելի ուժի ազդեցությունը:

35. Պայմանագրի շրջանակներում անհաղթահարելի ուժեր են համարվում խոչոր ջրհեղեղները, երկրաշարժերը և մյուս բնական աղետները, ռազմական գործողություններ ու հանգամանքներ, որոնք ենթակա չեն կողմերի հսկողությանը և ծագել են պայմանագրի կնքումից հետո ու նյութական տեսակետից բացասաբար են ազդում կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման հնարավորության վրա:

36. Անհաղթահարելի ուժ ներկայացնող հանգամանքի ծագումից հետո 14 օրվա ընթացքում այն կողմը, որը նման հանգամանքի պատճառով ի վիճակի չէ կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, պետք է մյուս կողմին նման հանգամանքի մասին տեղեկացնող գրավոր ծանուցում ներկայացնի: Ծանուցման մեջ պետք է պատճառաբանվի, թե որքանով է ստեղծված իրավիճակը խոչընդոտում տվյալ կողմի կողմից պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարմանը:

Հակառակ կողմի պահանջով՝ անհաղթահարելի ուժի ազդեցության տակ հայտնված կողմը պետք է նման հանգամանքները հավաստող բավարար ապացույցներ ներկայացնի: Անհաղթահարելի ուժի ազդեցության ավարտից հետո անհաղթահարելի ուժի ազդեցության տակ հայտնված կողմը պարտավոր է դրա մասին անհապաղ գրավոր ծանուցել մյուս կողմին: Ընդ որում, ծանուցման մեջ պետք է նշվի, թե արդյոք անհաղթահարելի ուժի ազդեցության ավարտը հնարավորություն ստեղծում է գործունեությունը շարունակելու համար:

37. Եթե կողմը չուղարկի կամ ոչ ժամանակին ուղարկի պայմանագրի 36-րդ կետում նշված ծանուցումները, ապա պարտավոր է մյուս կողմին փոխհատուցել դրա մասին չծանուցման կամ ոչ ժամանակին ծանուցման հետ կապված վնասները:

38. Պարտավորությունների կատարումը հնարավոր դառնալուն պես՝ անհաղթահարելի ուժի ազդեցության տակ հայտնված կողմը պետք է ձեռնամուխ լինի իր այն պարտավորությունների կատարմանը, որոնց իրագործումն ընդհատվել կամ դադարեցվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակում է 6 ամսվանից ավելի /կամ երբ ակնհայտ է դառնում, որ նման իրավիճակը կամ դրա հետևանքները կշարունակվեն 6 ամսվանից ավելի/, ապա կողմերը պետք է բանակցություններ սկսեն անհաղթահարելի ուժի ազդեցության տակ հայտնված կողմի համար հնարավոր ելք գտնելու նպատակով, ինչը վերջինիս թույլ կտա կատարել պայմանագրի համաձայն ստանձնած իր պարտավորությունները:

XV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

39. Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել կողմերի ստորագրած գրավոր փաստաթղթերի միջոցով:

40. Եթե պայմանագրի որևէ դրույթ ճանաչվի օրենքին հակասող կամ ուժը կորցրած, ապա պայմանագրի մնացած դրույթները կմնան ուժի մեջ:

41. Պայմանագիրը կնքված է հայերենով և _____ լեզվով /եթե լիցենզառուն օտարերկրյա իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է/: Հայերեն և _____ տարբերակների միջև անհամապատասխանություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

XVI. ԿԻՐԱՆՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

42. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությունը:

XVII. ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

43. Կողմերից յուրաքանչյուրը հավաստում և երաշխավորում է որ իրենց անունից պայմանագիրն ստորագրող անձինք լիազորված են և, որ պայմանագիրը կնքվել է պատշաճ ձևով և դրանով կողմերը ձեռք են բերել իրավունքներ ու ստանձնել համապատասխան պարտավորություններ:

44. Լիազոր մարմինը հավաստում և երաշխավորում է, որ՝

ա/ ձեռք է բերել բոլոր իրավասությունները և լիազորությունները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ձեռնարկվել են նաև օրենսդրական գործողություններ, որպեսզի պայմանագիրը լինի վավերական և ունենա իրավաբանական ուժ:

բ/ լիցենզառուին ամբողջ ներդրումների և այլ գույքի սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը օրենքով սահմանված դեպքերում: Հասարակության և պետության կարիքների համար լիցենզառուի սեփականությունը կարող է օտարվել միայն բազադիկ դեպքերում „Օտարերկրյա ներդրումների մասին,, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան:

գ/ լիցենզառուի նկատմամբ չի կիրառի որևէ փոխանցման սահմանափակում /այն իմաստով, ինչպես սահմանված է Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության կողմից/:

դ/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան կտրամադրի արտոնագրեր, կրնդունի որոշումներ, եթե այդպիսիք պահանջվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ, որպեսզի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզառուին ընձեռնի հնարավորություն օգտվելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կողմից կնքված կամ կնքվելիք ցանկացած երկկողմ կամ բազմակողմ առևտրին, ներդրումներին վերաբերվող միջազգային համաձայնագրերի դրույթներից՝ պայմանով, որ լիցենզառուն տրամադրի բոլոր անհրաժեշտ կամ օրենքով նախատեսված հայտերը, տվյալները և նյութերը:

ե/ լիցենզիայի գործողության ընթացքում լիցենզառուի կողմից համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում կոնցեսիայի օրենքով սահմանված կարգով կտրամադրվի ընդերքի իրեն հատկացված տեղամասում լիցենզիայում չնշված օգտակար հանածոների հայտնաբերման դեպքում համապատասխան հանքարդյունահանման լիցենզիաներ:

45. Կողմերը ընդունում են, որ առանց որևէ սահմանափակման, նշված հավաստիացումների և երաշխիքների խախտումը կդիտվի որպես պայմանագրի դրույթների խախտում:

46. Լիցենզառուի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական մարմինները /ներառյալ լիազոր մարմինը/ իրենց իրավասությունների սահմաններում պարտավոր են, առանց անհիմն հետաձգումների, լիցենզառուին տրամադրել թույլտվություններ, լիցենզիաներ և այլ փաստաթղթեր, եթե դրանք լիցենզառուին անհրաժեշտ են պայմանագրով ու լիցենզիայով լիցենզառուի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար:

47. Եթե լիցենզառուն որևէ պետության կառավարությունից կամ որևէ միջազգային և օտարերկրյա պետական ու մասնավոր հաստատություններից ձեռք կբերի ապահովագրական պոլիսներ, վարկեր, շնորհներ և /կամ/ այլ ծրագրեր, որոնք կարող են լիցենզառուի կողմից դիտվել որպես լիցենզառուի գործունեության իրականացման համար անհրաժեշտ տարրեր, ապա նման հաստատություններ դիմելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը կտրամադրի լիցենզառուի դիմումին օժանդակող գրություններ առանց ֆինանսական պարտավորություններ ստանձնելու:

XVIII. ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ

48. Հաղորդումների կատարումը համարվում է պատշաճ, եթե տրված է գրավոր կամ ուղարկված է էլեկտրոնային փոստով կամ կատարված է փոխանցում ֆաքսի միջոցով /յուրաքանչյուր դեպքում պետք է առկա լինի գրավոր ստացական, որը կարող է լինել էլեկտրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով փոխանցված/ կողմի՝ ստորև նշված հասցեով կամ այդ նպատակով կողմի նշած մեկ այլ հասցեով՝

Լիազոր մարմին՝

հասցեն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ _____

ֆաքսի համարը _____

Լիցենզառուին՝

հասցեն՝ _____

ֆաքսի համարը _____

ԼՂՀ կառավարության աշխատակազմի

ղ ն կ ա վ ա ր - ն ա խ ա ր ա ր

Ս. Գրիգորյան